ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2023 թվականի թիվ 149-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 286-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի «Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 286-Ա որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

15.06.2023

X

Ք. Իջևան
15 հունիսի 2023թ.

Հավելված 1
ՀՀ Տավուշի մարզպետի 2023թվականի
հունիսի 15-ի թիվ 149-Ա որոշման

Հավելված 1
ՀՀ Տավուշի մարզպետի 2022թվականի
հոկտեմբերի 17-ի թիվ 286-Ա որոշման

ԿԱԶՄ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ - մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ - ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալ
- մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
- մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ
- մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
- մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
- մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
- մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
- մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
- Իջևան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
- Դիլիջան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
- Բերդ համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
- Նոյեմբերյան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
- «ՀԷՑ» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի տնօրեն (համաձայնությամբ)

- «ՀԷՑ» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի «Նոյեմբերյան» էլ. ցանցի պետ (համաձայնությամբ)
- «ՀԷՑ» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի «Բերդ» էլ. ցանցի պետ (համաձայնությամբ)
- «ՀԷՑ» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի «Դիլիջանի» էլ. ցանցի պետ (համաձայնությամբ)
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի Դիլիջանի տարածքային տեղամասի պետ (համաձայնությամբ)
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի Տավուշի տարածքային տեղամասի պետ (համաձայնությամբ)
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի Նոյեմբերյանի տարածքային տեղամասի պետ (համաձայնությամբ):

Գլխավոր քարտուղար Ա. Գևորգյան

15.06.2023

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241